

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական և դասախոսական առցանց  
հարցման արդյունքները /2016-17 ուստարի/

Ուսանողների և դասախոսների կարծիքը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում  
ուսանողների գնահատման վերաբերյալ

30.09.2017թ.

Ընդհանրապես կրթական կյանքի և մասնավորապես բուհական կրթության ամենանուրբ, կարևոր ու ռիսկային ոլորտը սովորողների ձեռքբերումների, այսինքն՝ **գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատումն** ու բուհում գործող գնահատման համակարգի կիրարկման գործընթացներն են:

Գնահատումների հիման վրա՝

- մասնագետին շնորհվում է որակավորում, տրվում է համապատասխան վկայական, որը վճռական դերակատարություն ունի սովորողի աշխատանքային ու անձնական ողջ կյանքի ընթացքում,
- ամենից ցայտուն է դրսևորվում դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող հարաբերությունների սուբյեկտիվ կողմը, նրանում արդարության ու համարժեքության բաղադրիչները (երևույթներ, որոնց վերաբերյալ նույնիսկ փոքր դժգոհությունները կարող են բացասաբար անդրադառնալ ուսանողական հանրային բարոյահոգեբանական մթնոլորտի, սովորողների տրամադրության, հետևաբար՝ առաջադիմության, ընդհանրապես ուսման որակի վրա):

Գնահատումն այն ոլորտն է՝

- որտեղ ամենից ուժեղ է անձնական գործունի դերը, և դա որպես խնդիր պարբերաբար ու նորովի քննարկելու, օպտիմալ տարբերակներ գտնելու անհրաժեշտություն ունի,
- որը գիտելիքների ու դրանց հիմնավորվածության գնահատման հարցում պարունակում է սուբյեկտիվ վերաբերմունքի տարր, բարոյական ճաշակ, որն էլ կարող է արդարացիության, հիմնավորվածության զգացողության վրա ունենալ դրական կամ բացասական ազդեցություն,
- որին ավելանում է ճանաչողությունը, առարկայական տիրույթներում գիտելիքների խորացումն ու ընդլայնումը, ինչն իր հերթին պահանջում է գնահատման կարգի, բաղադրիչների համապատասխանեցում:

Մրանք խնդիրներ են, որոնք անընդհատ ուշադրություն են պահանջում: Այդ պատճառով հասկանալի է գնահատման խնդիրների հանդեպ մասնաճյուղի տնօրենության ամենօրյա ուշադրությունը, ներմասնաճյուղային պատասխանատու կառույցների աշխատակազմի հետ պարբերական քննարկումները, հիմնավորված նորամուծություններին ընդառաջ գնալու պատրաստակամությունը:

2008-2009 ուստարվանից Բոլոնիայի գործընթացի պահանջներին ընդառաջ մասնաճյուղն անցել է **կրեդիտային համակարգով բակալավրի կրթական ծրագրերի հրականացմանը**:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել են ուսանողներին առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված

կերպով թերևս ցվել է նրանց լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ուսանողի ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգը<sup>1</sup> ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ: Ըստ այդմ՝ մասնաճյուղում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են.

- կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

Նորանկախ Հայաստանի կրթական բարեփոխումներում կրեդիտային համակարգի ներմուծումը պատմական նորույթ էր, որն անհրաժեշտաբար առաջացրեց նաև գնահատման նոր՝ բազմագործոն, ավելի բարդ ու բազմաբնույթ համակարգի ներմուծումը: Միջանկյալ բանավոր և գրավոր քննություններ, թեստային քննություններ և ստուգումներ, եզրափակիչ բանավոր ու գրավոր քննություններ, մասնակցային միավորներ, գնահատման սանդղակներ, այս ամենը վերջին տարիներին «բարդացրել» են թե՛ կազմակերպիչների, թե՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, թե՛ հենց իրենց՝ ուսանողների ուսումնառության ընթացքը: Նման բարդացումը պահանջում է պարբերական քննարկումներ, անընդհատ կատարելագործման անհրաժեշտություն, որում հետադարձ կապի ապահովումը դառնում է օրախնդիր:

Այս համատեքստում մասնաճյուղի ղեկավարությունը, առաջին հերթին տնօրենը էապես արժևորել և արժևորում է ուսանողների ու դասախոսական անձնակազմի՝ գիտակա-նորեն հիմնավորված կարծիքը կրթական գործընթացներում առարկայորեն, նյութաբարոյական իմաստով կարևորագույն ոլորտի՝ ուսանողների գիտելիքների ու կարողությունների գնահատման բազմաբնույթ ու բազմագործոն համակարգի կիրառելիության ու արդյունավետության վերաբերյալ: Թերևս ակտիվության ու լիազորությունների տեսանկյունից պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերաբերմունքն այդ խնդրի նկատմամբ շատ ավելի, քան ուսանողությանը, ունի առանցքային նշանակություն, որը, բնականաբար, հնարավոր է բացահայտել միայն սոցիոլոգիական հարցումների օգնությամբ:

Գնահատման գործող համակարգի վերաբերյալ ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի կարծիքը պարզելու համար մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնի մասնագետները 2012-13, 2014-15 և 2016-17 ուստարիներին անց են կացրել առանձին

---

<sup>1</sup> Տե՛ս Կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրով ուսանողների գնահատման կարգը (ԵՊՀ ԻՄ ԳԽ, 28.02.2012թ., արձ. թիվ 1, <http://ijevan.yu.am/wp-content/uploads/2011/08/Order-of-the-credit-system-in-the-educational-process.pdf>):

հարցումներ (ընդ որում՝ մասնաճյուղից բավարարվածության 2016-17 ուստարվա հարցումն իրականացվել է առցանց հարցման շրջանակներում):

Հարցաշարերը, որոնք տարեցտարի վերանայվել ու կատարելագործվել են՝ հիմնվելով նախորդ հարցման արդյունքների քննարկման ու վերլուծության վրա, ամրագրում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի կարծիքը կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշների, բազմագործոն գնահատման համակարգի արդյունավետության, թեստային համակարգի օպտիմալության, միջանկյալ քննությունների արդարացվածության և օգտակարության, դասախոսների կողմից գնահատումների օբյեկտիվության ու թափանցիկության վերաբերյալ: Ինչպես նշել ենք, առանձնակի կարևորում ենք 2016-17 ուստարվա առցանց եղանակով հարցման արդյունքները, քանի որ այն մեծապես հաշվի է առել նախորդ հարցումների տվյալները, կատարելագործվել են հարցադրումները և, որ ամենակարևորն է, էապես ապահովվել է հարցման անանունությունը, որը համարվում է տվյալների հավաստիության կարևորագույն նախապայմաններից մեկը: Այդ պատճառով հիմնականում վերլուծվել են հենց 2016-17 ուստարվա առցանց հարցման արդյունքները, և կատարվել է նախորդ հարցումների արդյունքների հետ համեմատական վերլուծություն:

Նշենք, որ 2016-17 ուստարվա առցանց հարցմանը մասնակցել են մասնաճյուղի առկա ուսուցման I-III կուրսերի բոլոր ուսանողները (**403 ուսանող**) և մասնաճյուղի **68 դասավանդողներ** (դասավանդողների ընդհանուր քանակի գրեթե **60%**-ը):

Դասախոսների և ուսանողների սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները, ուսումնական կյանքի շահախնդիր երևույթների յուրովի ընկալումն ու գնահատումն ավելի է ընդգծվում, երբ համեմատում ենք վերջին տարիներին ուսումնառության որակի ապահովման գործընթաց ներմուծված կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշների հետ կապված հարցերը: Այն մեր փաստարկումների ճշմարտացիության, նման հարցումների արդյունքների կարևորության յուրովի ապացույց է:

2016-17 ուստարվա առցանց հարցման արդյունքների հիման վրա դիտարկենք դասախոսների և ուսանողների կարծիքը կրթական վերջնարդյունքների և նրանց գնահատման մասին (հարցին «այո» պատասխանած ուսանողների համամասնությամբ, *Աղյուսակ 1*).

*Աղյուսակ 1.*

Հարց	Դասախոսներ		Ուսանողներ	
	Քանակ	%	Քանակ	%
Գիտե՞ք, թե ինչ են ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները:	-	-	306	75,9%
Ուսանողների առաջարկով դասախոսները կատարե՞լ են արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն:	29	42,6%	226	56,1%
Պահպանու՞մ են արդյոք դասախոսներն իրենց սահմանած գնահատման չափանիշները:	66	97,1%	325	80,6%

Ինչպես տեսնում ենք, 4 ուսանողից 3-ը (**75,9%**) գիտի վերջնարդյունքների գնահատման չափանիշների մասին, 5-ից 4 ուսանող (**80,6%**) հավաստել է, որ դասախոսներն իրենց սահմանած գնահատման չափանիշները պահպանում են: Մա մասնագիտորեն կարելի է շատ բարձր վիճակագրական արդյունք համարել, իսկ 24% այն ուսանողները, որոնք «անիրագել»

են գնահատման չափանիշներից, և 20% այն ուսանողները, որոնք համարում են, որ դասախոսներն իրենց չափանիշները չեն պահպանում, վիճակագրական սխալանքի շրջանակներում ամենայն հավանականությամբ այն ուսանողներն են, ովքեր գործնականում աննշան հետաքրքրություն են դրսևորում ուսանողական խնդիրների հանդեպ (սա մեր սուբյեկտիվ կարծիքն է): Դա հայտնի իմաստով բնական է, քանզի անհնար է ունենալ իդեալական ուսումնական ու սոցիալական ակտիվության 100 տոկոսանոց ուսանողություն: Միաժամանակ այդ բացը մասնագիտական պատրաստության պատասխանատուների համար հետաքրքրություն ներկայացնող փաստ է՝ պարզելու համար, թե որքանով է դա կազմակերպչական թերաժություն, որքանով ուսանողական անհետաքրքրության կամ ոչ անկեղծության արդյունք և ինչպես է հնարավոր օպտիմալ ժամկետներում լրացնել այդ բացը:

Վիճակագրորեն դրական ու օգտակար արդյունք է համարվում նաև այն տվյալը, որը կապված է ուսանողների առաջարկով դասախոսների կողմից գնահատման չափանիշների փոփոխության հետ: Այդ հարցին դրական է պատասխանել 403 ուսանողների **56,1%**-ը: Եվ իրոք, եթե ավելի քան երկու ուսանողից մեկը (5 դասախոսից 2-ը՝ **42,6%**) հավաստում է, թե նման փոփոխություն կատարվել է, առավելապես այն կարող է լինել տվյալ հարցում մասնաճյուղում իշխող դրական մթնոլորտի ապացույց: Դա նշանակում է, որ դասախոսական կազմը գնահատման սեփական հարաբերական ինքնուրույնության շրջանակներում պատրաստակամ է ու շահախնդիր և ուսանողների խելամիտ առաջարկների դեպքում ընդառաջ է գնում ու իրագործում է ցանկալի փոփոխությունները:


Ասվածի կողմնակի ապացույց է նաև այն հարցի պատասխանը, թե դասախոսները երբ են ուսանողներին ներկայացնում իրենց գնահատման չափանիշները (*Աղյուսակ 2*).

*Աղյուսակ 2.*

Գնահատման չափանիշները դասախոսները ներկայացնում են.	Դասախոսներ		Ուսանողներ	
	Քանակ	%	Քանակ	%
եզրափակիչ քննությունից առաջ	-	0%	23	5,7%
ընթացիկ քննությունից կամ ստուգումից առաջ	1	<b>1,5%</b>	41	10,2%
կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	<b>25</b>	<b>36,8%</b>	102	<b>25,3%</b>
կիսամյակի սկզբում	<b>40</b>	<b>58,8%</b>	<b>153</b>	<b>38,0%</b>
յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	2	<b>2,9%</b>	67	<b>16,6%</b>
չեն ներկայացրել ընդհանրապես	-	0%	17	<b>4,2%</b>
<i>Ընդամենը՝</i>	<b>68</b>		<b>403</b>	

Այստեղ իմաստային տեսանկյունից ընդհանրություն ունեն և կարող ենք վիճակագրորեն միավորել «կիսամյակի սկզբում» (**58,8%, 38,0%**), «յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ» (**2,9%, 16,6%**) և «կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ» (**36,8%, 25,3%**) դասախոսների և ուսանողների պատասխանները, որոնց համաձայն՝ հարցված ուսանողների գրեթե **80,0%**-ը (5-ից 4-ը) հավաստում է, որ գործնականում իրենք մշտապես տեղեկացված են, իսկ դասախոսների **98,5%**-ը հավաստում է, որ ի սկզբանե ու յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ իրենք ուսանողներին այդ մասին տեղեկացնում են: Այստեղ հստակորեն, եթե հաշվի առնենք «անմեղության կանխավարկածը», այսինքն՝ բացառենք այն հանգամանքը, թե դասախոսների մոտ մեկ

քառորդը ապակողմնորոշել են հարցման կազմակերպիչներին, ապա «խնդիրը» նորից մնացած 20 տոկոս ուսանողներին է վերաբերում: Նշենք նաև, որ 2014-15 ուստարում անցկացված հարցման մեջ (հարցմանը մասնակցել է որոշակի ընտրությամբ 90 ուսանող) նույնանման հարցի պատասխանները գործնականում վիճակագրորեն նույն կարգի են (*Գրաֆիկ 1*).



Ըստ այդմ, եթե հաշվի առնենք առցանց հարցման յուրահաստկությունը, որ ուսանողներն ավելի անկաշկանդ են իրենց անկեղծ ու հավաստի պատասխաններում, որոշակի մոտավորությամբ կարող ենք սույն հարցում արձանագրել որակական աճ:

Այս տվյալներից ինչպիսի՞ հետևության կարող ենք հանգել: Հեռու ենք այն մտքից, որ երկու հարցման մեջ էլ մի քանի ուսանողներ դրսևորել են չարակամություն, թեև եզակի դեպքերում դա էլ բացառելն անհնար է: Սակայն ճշմարտությանը թերևս շատ ավելի մոտ է այն իրողությունը, թե վիճակագրորեն փոքրաքանակ այդ ուսանողները կա՛մ պարբերաբար դասերից բացակայողներն են, կա՛մ նրանց առանձնապես չի հետաքրքրում գնահատականի մասնակցային բաղադրիչը, կա՛մ բոլորովին անտեղյակ են, կա՛մ էլ ընդամենը քննությունից առաջ են «իրենց թույլ տվել» ճշգրտել, թե ինչպես և ինչի համար են գնահատվելու, կա՛մ գուցե կան այլ սուբյեկտիվ պատճառներ: Սա ոչ թե դասախոսների կամ մասնագիտական պատրաստության պատասխանատուների արդարացում է, այլ օբյեկտիվ իրողություն: Կարող ենք փաստել, որ մասնաճյուղում անհնար է, որ որևէ ուսանող հետաքրքրվի գնահատման չափանիշներով, և նրան սպառիչ պատասխան չտրվի: Այդ մասին խոսվում է միշտ, դա պարտադրված և ամրագրված է դասախոսների **«դասընթացների փաթեթներում»** (պորտֆոլիոներում):

«Դասընթացի փաթեթը» դասախոսի գործունեության պլանավորման յուրօրինակ և արդյունավետ միջոց է, որում դասընթացի պլանավորման և իրականացման բաղադրիչների

մեջ իր կարևոր տեղն ունի ուսանողների ձեռքբերումների գնահատումը, այսինքն՝ կրթական վերջնարդյունքներին համապատասխան գնահատման մեթոդների և ձևաչափերի ամրագրումը, ապա, ըստ դրանց, գնահատման իրականացումը:

Եվրոպական կրթական տարածք ինտեգրման նոր կրթական չափորոշիչներին համապատասխան յուրաքանչյուր բուհում գործող գնահատման համակարգը պետք է բացահայտի ուսանողի ձեռք բերած կրթական վերջնարդյունքների, այսինքն՝ յուրացրած գիտելիքների և դրանց կիրառման, ձեռք բերած հմտությունների, իրեն դրսևորելու կարողությունների մակարդակը:

Այդ պահանջների առավելագույնս իրականացման համար մասնաճյուղը 2013 թվականից պարբերաբար վերանայում է ուսանողների գնահատման իր համակարգը: Համապատասխան ստորաբաժանումները, ուսումնասիրելով եվրոպական և հայաստանյան առաջատար բուհերի գնահատման համակարգերը և հաշվի առնելով գնահատման գործընթացում սեփական փորձն ու ձեռքբերումները, մշակել և 2014 թ. մայիսից դասախոսների և ուսանողների քննարկմանն են ներկայացրել ըստ ուսումնառության արդյունքների՝ ուսանողների գնահատման համակարգի նախագծեր: Դրանք ուսանողի արդյունարար գնահատականի ձևավորման համակարգում, բացի ընդունված քննական ձևերից, ներառում են նաև գործնական, լաբորատոր, սեմինար դասընթացներից և ինքնուրույն աշխատանքներից ուսանողի ձեռքբերումների գնահատման բաղադրատարրեր: Նախապես ընտրված փորձառու դասախոսներն այդ նախագծերը 2014-15 ուստարում փորձարկել են գնահատման տարբեր ձևեր ունեցող (եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման և ստուգարքով ավարտվող) դասընթացների համար: Քննարկվելուց և վերամշակելուց հետո այդ նախագծերը 2015-16 ուստարուց մասնաճյուղում մտել են լիարժեք կիրառության մեջ: Դասախոսներն իրենց յուրաքանչյուր դասընթացի համար կազմած պորտֆոլիոյում ամրագրում են այդ դասընթացից ուսանողի ակնկալվող ուսումնառության արդյունքները, դրանց ձեռքբերման, դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդները, մանրամասն նկարագրում են ըստ վերջնարդյունքների գնահատման չափանիշները, նաև գնահատման ռազմավարությունը: Ապա գնահատման չափանիշները և գնահատման ռազմավարությունը ներկայացնում են ուսանողներին՝ իրազեկելով նրանց ողջ կիսամյակի ընթացքում իրենց համատեղ գործունեության մարտավարության մասին:

Վստահաբար կարող ենք նշել, որ մասնաճյուղում ուսումնառությունն արդյունավետ իրականացվում է՝ համաձայն կազմված դասընթացների փաթեթների, իսկ ամբիոնների ու համապատասխան կառույցների կողմից իրագործվում է մշտական հսկողություն: Դրա հիմնավորումն է, ինչպես մեկնաբանվեց նաև վերևում, գնահատման չափանիշների մասին ուսանողների իրազեկվածության բարձր մակարդակը (*Գրաֆիկ 1*):

Անդրադառնանք 2012-13, 2014-15 և 2016-17 ուստարիներին գնահատման բազմագործոն համակարգի վերաբերյալ անցկացրած դասախոսական և ուսանողական հարցումներից ստացված արդյունքների վերլուծությանը:

Նախ դիտարկենք 2016-17 ուստարվա առցանց հարցման այն արդյունքները, որոնք ներկայացնում են, թե որքանով է գնահատման համակարգը նպաստում ուսանողների մասնագիտական տարբեր որակների ձեռքբերմանը (*Աղյուսակ 3*).

Աղյուսակ 3

Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում .	Միջ.գն.
բանավոր խոսքի զարգացմանը	4,17
գրավոր խոսքի զարգացմանը	4,18
տեսական գիտելիքների բացահայտմանը	4,22
գործնական հմտությունների դրսևորմանը	4,13
կարողությունների դրսևորմանը	4,15



Ինչպես տեսնում ենք, 5-բալանի գնահատման սանդղակով բազմագործոն համակարգի դրական ազդեցությունը բոլոր որակների վրա ուսանողների կողմից գնահատվել է 4 բալից ավել: Այդ գնահատականները գտնվում են **4,13-4,22**-ի միջակայքում և վիճակագրորեն նույն կարգի են, ընդ որում՝ հարցմանը մասնակցած 403 ուսանողներից 323-336 ուսանողներ (**80,1-83,4%**) գնահատել են «**զերազանց**» ու «**լավ**», այսինքն՝ ավելի քան 5-ից 4-ը կարծում է, որ գնահատման գործող համակարգն ընդհանուր առմամբ թույլ է տալիս լիարժեքորեն զարգացնել գրավոր ու բանավոր խոսքը, բացահայտել տեսական գիտելիքները, դրսևորել գործնական հմտություններն ու կարողությունները: Միաժամանակ ուսանողների մի մասը (16,6-19,9%) այդ աստիճան բարձր չի համարում իրենց մասնագիտական որակների վրա գնահատման գործող համակարգի ազդեցությունը: Եթե մի պահ վերացարկվենք, կարող ենք համարել, որ կան անմիջական ուսումնառության գործընթացներից կտրված ուսանողներ, որոնք իրապես ի վիճակի չեն համարժեքորեն ընկալել ու գնահատել այդ համակարգը: Սակայն միաժամանակ շատ հնարավոր է, որ դա պայմանավորված է նաև մասնագիտությունների յուրահատկություններով: Եվ իրոք, բարձր կուրսերի ուսանողներից կազմված ֆոկուս-խմբերում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այդ կարծիքների վրա որոշակի ազդեցություն ունեն ինչպես մասնագիտությունների առանձնահատկությունները, այնպես էլ սուբյեկտիվ գործոնը:

Թեև 5-բալանի սանդղակով գնահատման բազմագործոն համակարգի արդյունավետությունը գնահատվել է 4 բալից բարձր, սակայն ներկայացված միջին գնահատականները խոսում են այնքանով, որ այնուամենայնիվ որքան էլ յուրաքանչյուր դասախոս իր դասընթացի գնահատման ինքնուրույնության շրջանակներում փնտրում է ուսանողների ձեռքբերումների գնահատման տարբեր մեխանիզմներ և մեթոդներ, միևնույն է, ուսանողները քննադատաբար են վերաբերվում գնահատման համակարգի հնարավորություններին: Դրանով նրանք նոր խնդիրներ են դնում թե՛ մասնաճյուղի ղեկավարության, թե՛ դասավանդողների առջև:

Անդրադառնանք գնահատման համակարգի տարբեր **բաղադրատարրերի և նրանց գնահատման ձևերի** արդյունավետության վերաբերյալ ուսանողների գնահատականների վերլուծությանը.

1. Գնահատման համակարգում առանձնակի կարևորվում է **եզրափակիչ քննության** դերն ու նշանակությունը: Երբ այն պատասխանատուների կողմից նախապատրաստված է և

իրագործվում է լիարժեքորեն, ապա մեծապես օժանդակում է սովորողի ինքնադրսևորմանը, կիսամյակի ընթացքում տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված ուսանողական թերացումների ու բացթողումների «փոխլրացմանը» և այլն: 2016-17 ուստարվա հարցմանը մասնակցած դասախոսների **88,2%**-ը համարում է, որ եզրափակիչ քննությունը լիարժեքորեն («5» և «4» գնահատականներ) բացահայտում է սովորողների գիտելիքները, **76,5%**-ը՝ կարողությունները, **75,0%**-ը՝ հմտությունները: Նույն ուստարվա ուսանողական հարցման արդյունքների համաձայն՝ 403 ուսանողից 310-313 ուսանող (**77-78%**-ը) բավարարված է («5» և «4» գնահատականներ) եզրափակիչ քննության միջոցով իր գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացահայտումից: Ի դեպ, որակապես գրեթե նույն գնահատականներն են ստացվել 2013, 2015 և 2017 թթ. հարցումներում (*Գրաֆիկներ 2,3*):




2. Հարցումներում պարզաբանվում է նաև ուսանողների կարծիքը արդյունաբար գնահատականում **եզրափակիչ բանավոր քննությանը հատկացված 10 միավորի** արդարացվածության վերաբերյալ: Առցանց հարցման 403 ուսանողից 323-ը (**80,1%**) կարծում է, որ այն լիովին արդարացված է: Ուսումնառության կազմակերպման մեջ շահախնդիր անձինք ու կառույցներն անտարբեր չեն «անցնում» նաև վիճակագրորեն փոքրաքանակ այն ուսանողների կարծիքի կողքով, որոնք եզրափակիչ բանավոր քննությանը տրված միավորը չեն համարում «իդեալական» կամ կարծում են, որ այն լիարժեքորեն չի բացահայտում իրենց գիտելիքները, հմտությունները, առավել ևս՝ կարողությունները: Առցանց հարցման մեջ 31 ուսանող (8,0%) եզրափակիչի 10 միավորի արդարացվածությունը գնահատել է ցածր, իսկ 49-ը (մոտ 12,0%-ը)՝ «բավարար»: Մոտավորապես նույն քանակության պատասխաններում




ուսանողները նշել են, թե եզրափակիչ քննությունը լիարժեքորեն չի բացահայտում իրենց գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Այստեղ արդարացվածության համեմատ փոքր-ինչ շատ են «բավարար» գնահատականները (*Գրաֆիկ 4*):

3. Չորս ուսանողից երեքը համաձայն է, որ միջանկյալ քննություններն ու ստուգումները մեծապես օգնում են դասընթացների ավելի հեշտ յուրացմանը (403 պատասխաններից «շատ բարձր» ու «բարձր» են գնահատել 354 ուսանողներ): Իսկ ահա 49 (12,0%) ուսանողի համար




միջանկյալ քննություններն ու ստուգումները բավարար չափով չեն օժանդակում դասընթացների յուրացմանը: 5 պատասխանողից չորսը (322 ուսանող) լիովին կիսում է հարցադրման այն միտքը, որ ստացած միավորները համարժեքորեն արտացոլում են իրենց իրական ձեռքբերումները («5» և «4»): 51 ուսանողի համար (մոտ 13,0%) դա այդպես չէ: Ըստ որում՝ բոլորովին պարտադիր չէ, որ նման ուսանողները նկատի ունենան միայն իրենց ձեռքբերումների «թերագնահատումները»: Բացառված չէ (առավել ևս մասնաճյուղում), որ լինեն այն աստիճան անկեղծ ու ինքնաքննադատ սովորողներ, որոնք համարեն, թե իրենք «գերագնահատված» են: Դասախոսներն ուսանողների հետ վիճակագրորեն համակարծիք են, որ միջանկյալ քննություններն ու ստուգումներն օգնում են դասընթացի ավելի հեշտ յուրացմանը, ըստ որում՝ երկու դեպքում էլ այն գրեթե ընդգծում է միջանկյալ ստուգումների արդյունավետության «բարձր» արժեքը: Որակապես նույն գնահատականները դրսևորվել են նաև տարբեր տարիների հարցումների արդյունքները համեմատելիս (*Գրաֆիկ 5*):



4. Սույն համատեքստում հատկանշական են թեստային քննությունների հանդեպ մասնագիտական կրթության երկու գլխավոր դերակատարների՝ դասախոսների և ուսանողների գնահատականները: Այստեղ նկատում ենք գնահատումների որակաքանակական տարբերություն: Ուսանողների գնահատականները, որոնք բարձրագույն չեն (միջինը՝ 3,65-3,79), գերազանցում են դասախոսների դրական գնահատականներին: Ի դեպ, երբ համեմատում ենք տարբեր տարիների արդյունքները

(*Պրաֆիկ 6*), երևում է, որ թեստերի արդյունավետության գնահատականները փոքր-ինչ աճել են, սակայն առանձնապես բարձր չեն: Սա ահազանգում է այն մասին, որ շատ մասնագիտությունների առանձնահատկությունները թույլ չեն տալիս թեստերի միջոցով բացահայտել և ըստ էության գնահատել ուսանողների ձեռքբերումները: Մասնաճյուղում վերջին հինգ տարվա ընթացքում բազմիցս վերանայվել են թեստերի կիրառման պահանջները, դասախոսների կողմից կիրառվել են տարբեր տեսակի թեստեր, սակայն բավարարվածությունը նրանց արդյունավետությունից չի անցել 4,0 միջին գնահատականի սահմանը՝ թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների դեպքում:




Ուսումնասիրման կարևոր ասպարեզ է նաև մասնաճյուղում ուսանողների գնահատման օբյեկտիվությունը, նրա թափանցիկությունը և ազնիվ մրցակցության պահպանումը:

Առցանց հարցման մեջ այն հարցին, թե **թեստերի կիրառումը** որքանով է հնարավորություն տալիս **խուսափել գրագողությունից**, «5» և «4» գնահատական է նշանակել 403 ուսանողից 201-ը, «3»՝ 97-ը: Միջին վիճակագրական բալը կազմում է 3,74 բալ այն դեպքում, երբ 2013 թ. հարցման մեջ կազմել է 3,06 բալ, իսկ 2015 թ. հարցման մեջ՝ 3,2 բալ: Այսինքն՝ սույն հարցում նկատելի է վիճակագրական որոշակի առաջընթաց:

Դրականորեն են ընկալվում նաև այն հարցի պատասխանները, թե **«շրջափոխման (ռոտացիոն) համակարգի»** կիրառումը որքանով է նպաստում ուսանողների **ազնիվ մրցակցությանը**: Ավելի քան 5 ուսանողից 3-ը (ընդհանուր թվի **61,5%**-ը) սույն հարցին պատասխանել է «շատ բարձր» և «բարձր», ընդամենը 53 հոգի (մոտ **13,0%**) ընդգծել է, որ այդ համակարգն էական դեր չունի ազնիվ մրցակցության ապահովման հարցում, առցանց հարցմանը մասնակցած 68 դասախոսից 44-ը (**64,7%**) տվել է «բարձր» գնահատական, և միայն 7 դասախոս չի համաձայնել նման պնդման հետ: Տվյալն առավելապես դրական է համարվում նաև այն պատճառով, որ թե՛ վճարովի ուսուցումը, և թե՛ «շրջափոխման համակարգը» պատմական նորույթ են նախորդի համեմատ, որի ակտիվ ներմուծումն ունի նաև սուբյեկտիվ դժվարություններ: Հոգեբանորեն նույնիսկ երիտասարդ ներկա սերնդի մեջ, ով ծնվել և մեծացել է ձևավորվող ու զարգացող մրցակցային, շուկայական համակարգում, իրենց զգացնել են տալիս անվճար պետական կրթական համակարգից բխող որակները. բոլոր դեպքերում դժվար է հաշտվել անվճարից վճարովի ուսուցման ձևին անցման հետ:

Ներկայացված արդյունքները բարձր են և գրեթե նույնն են ուսանողների և




դասախոսների դեպքում, միաժամանակ թողնում են ավելի ցածր արժեքի հոգեբանական տպավորություն: Մյուս կողմից, օրինակ, 2013 թ. հարցման մեջ դասախոսների դեպքում այն կազմել է 4,29 բալ, ուսանողներինը՝ 4,13, այսինքն՝ վիճակագրորեն նույն արժեքներն են: Իսկ ահա 2015 թ. հարցման մեջ դասախոսների և ուսանողների գնահատականների տարբերությունը կազմել է 0,6 բալ, որտեղ ուսանողներն ավելի շատ են համաձայն այն

մտքի հետ, թե ռոտացիոն համակարգն օժանդակում է ազնիվ մրցակցությանը (*Պրաֆիկ 7*): Առցանց հարցման մեջ այդ տարբերությունը նորից «հօգուտ» ուսանողության է:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ մասնաճյուղում, ինչպես ուսանողության, այնպես էլ դասախոսության գերակշիռ մասի հասարակական գիտակցության մեջ ռոտացիոն համակարգի կիրառումն ազնիվ մրցակցության ապահովման դրական գործոն է: Միաժամանակ վիճակագրական այդ տպավորությունները մի շարք պատճառներով կապված են գնահատող փոփոխական համախմբի (ուսանողական, որն օրինաչափորեն գրեթե կրկնակի փոփոխվում է) և ավելի քիչ փոփոխական՝ դասախոսական համախմբի սուբյեկտիվ ընկալումների հետ, որոշակիորեն վիճակագրական ազդեցություն ունեն ուսումնասիրվող երևույթների որակների գնահատման մեջ և արտահայտվում են խնդրո առարկայի հետ կապված տվյալներում, ինչը պահանջում է պարբերական ուշադրություն: Այդ պատճառով մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողության ներկայացուցիչների հետ քննարկումներում առանձնակի ուշադրություն է դարձվում «շրջափոխման համակարգի» կիրարկման օբյեկտիվության և թափանցիկության հիմնավորման հարցերին:

Ակնհայտ գոհունակության մեծացման միտում է նկատվում **գնահատման օբյեկտիվության** հարցում: Առցանց հարցման մեջ այն հարցին, թե գնահատման բազմագործոն համա-




կարգը որքանով է բարձրացնում գնահատման օբյեկտիվությունը, «շատ բարձր» ու «բարձր» է նշանակել 293 ուսանող, այսինքն՝ չորսից երեքը: 5-բալանի սանդղակով սույն տվյալը կազմել է 4,29 բալ: Համեմատության համար նշենք, որ 2013 թ. հարցման մեջ այն կազմել է 3,81, իսկ 2015 թ. հարցման մեջ՝ 4,16 բալ (*Պրաֆիկ 8*): 2013 թ. համեմատ առցանց


հարցման արդյունքն աճել է 0,48 միավորով, որն ակնկալում է բավարարվածության ակնհայտ մեծացում և միտում, որ մասնաճյուղն իր փնտրտուքների արդյունքում կհասնի ուսանողների ձեռքբերումների օբյեկտիվ գնահատման արդյունավետ համակարգի: Ասվածի կողքին

հավելենք, որ 2015 թ. հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները (100%) և 2017 թ. առցանց հարցմանը մասնակցած դասախոսների 98,5%-ը հավաստել են գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:

Ներկայացնենք գնահատման համակարգի հանդեպ մասնաճյուղում մանրակրկիտ ու շահախնդիր ուշադրությունը փաստող ևս մի քանի տվյալներ: Այսպես՝ առցանց հարցման մեջ ուսանող-պատասխանողների 92,8%-ը հավաստել է, որ **իրենց հայտնի է, թե ինչպես է քննության ընթացքում ձևավորվում իրենց միավորը**: Ըստ որում՝ 84,6%-ն ընդգծում է, որ իրենց ձեռք բերած միավորները **հիմնավորվում են** դասախոսների կողմից, եթե դրանք իրենց համար բավարար համոզիչ չեն լինում, իսկ 83,4%-ը հավաստում է, որ դասախոսներն **արձագանքում են ուսանողների բողոքարկումներին**: Հատկանշական է, որ 403 ուսանողից 310-ը նշել է, որ ուսանողների բողոքարկման արդյունքում դասախոսները **կատարել են միավորի փոփոխություն (Գրաֆիկ 9)**:



Սույն առնչությամբ որոշակի նկատառումների համար դիտարկենք գնահատման համակարգին վերաբերող հարցումներում ևս մեկ բաղադրատարրի վերաբերյալ ուսանողների և դասախոսների կարծիքները: 2017 թվականին 403 առցանց հարցված ուսանողների 80,4%-ը հավաստել է, որ գնահատման համակարգում **մասնակցությունների միավորի ներառումն** իրապես նպաստում է դասընթացին իրենց ներգրավվածությանը: Նորից կարծես «նույն» հինգ ուսանողից մեկն է, որ այդպես չի կարծում: Դասախոսները ևս բարձր են գնահատել մասնակցային միավորի դրական ազդեցությունն ուսանողի ներգրավվածության վրա (Գրաֆիկ 10): 2013 թ. հարցմանը մասնակցած դասախոսների 80,4%-ը և առցանց



հարցման մեջ 66,2%-ը տվյալ գործոնի ազդեցությանը շնորհել են «գերազանց» և «լավ» գնահատականներ: Նորից նկատենք ուսանողների վիճակագրական ավելի մեծ քանակությունը դասախոսների համեմատ: Սա, իհարկե, մտորումների տեղիք է տալիս:

Գնահատման արդյունաբար գնահատականում մասնակցությունների բաղադրիչի առկայությունն իր հակասական ըմբռումների պատճառով դարձել է տարբեր կարծիքների և մեկնաբանությունների, քննարկումների և նոր որոշումների նյութ: Այդ գործընթացից անմասն չի մնացել նաև Մայր բուհը և 2017 թ. ԵՊՀ-ն մշակել և գործառության մեջ է դրել գնահատման նոր համակարգը՝ առանց մասնակցության բաղադրատարրի: Մասնաճյուղը դա ընդունել է հիմք և 2017-18 ուստարում անցել բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի<sup>2</sup>:

Այս ամենը վկայում է, որ քանակապես շատ քիչ ուսանողների անիրագրելության ու գնահատման մեխանիզմների արդյունավետությունից ու սեփական գնահատականների հիմնավորվածությունից լիարժեքորեն բավարված չլինելն ավելի շատ ունի սուբյեկտիվ պայմանավորվածություն, քան տվյալ համակարգի անարդյունավետության կամ այն իրագործող կառույցների ու սուբյեկտների թերացություն: Ինչպես նշեցինք, դրանք կարող են լինել այն ուսանողները, որոնք տարբեր պատճառներով լիարժեք ուսանողական կյանքով չեն ապրում: Նրանց էապես չեն հետաքրքրում ո՛չ գնահատման մեխանիզմները, ո՛չ էլ դրանցից արդյունավետ կերպով օգտվելու հնարավորությունները: Կարող են լինել ուսանողներ, որոնք հարցումների հանդեպ ունեն որոշակի վերապահություն և օգտվելով նրանց ընձեռած «անանունության» ու «անպատժելիության» հնարավորությունից՝ հավաստի ու անկեղծ անհատական կարծիքը հայտնելը չեն կարևորում: Չենք բացառել նաև որոշ ուսանողների ուսումնական պասիվությունը՝ պայմանավորված տարածաշրջանային, ընտանեկան-կենցաղային խնդիրներով (սահմանամերձ բնակավայր, ուսմանը զուգահեռ ստիպողական զբաղվածություն), երբեմն նաև իրենց ցանկությանն ու կամքին հակառակ, որն անիրագրելության աղբյուր է:

Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ մասնաճյուղում գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը, սեփական գնահատականի արդարացիության հանդեպ ուսանողի վստահության աճը բնութագրող՝ գրեթե իդեալականին մոտ վիճակագրական այս տվյալները, որոնք յուրաքանչյուր նախորդ հարցման արդյունքների համեմատ արձանագրել են քանակական որոշ առաջընթաց (որակապես դրանք գրեթե նույն կարգի են) համոզում են, որ բուհում հստակորեն գործում է հետադարձ կապ «գնահատման եղանակներ-ուսանող» համակարգում, որ կիրառվող մեթոդները հնարավորինս կատարելագործվում են նաև պարբերաբար ուսանողների կարծիքը հաշվի առնելով, նաև դրա շնորհիվ դարձել են ավելի արդյունավետ: Արձանագրված փաստ է, որ մասնաճյուղում իրագործվում են բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումներ ուսանողակենտրոն մոտեցումների հաստատման և համապատասխան միջավայրի ձևավորման ուղղությամբ: Դրանք ամբիոններում իրականացվող բազմաբնույթ քննարկումներն են, փորձի փոխանակումն ապահովող միջոցառումները (դասախոսություններ, սեմինարներ և այլն):

<sup>2</sup> ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ (ԵՊՀ ԻՄ ԳԽ, 10.06.2017թ., արձ. թիվ 24, <http://ijevan.yso.am/wp-content/uploads/2013/12/appendix-24-2.pdf>):

Սրանց շնորհիվ կատարելագործվել են թեստային եղանակով ստուգումների մեխանիզմները: Գաղտնիք չէ, որ տվյալ եղանակը բնույթով պարունակում է արտագրելու, գրագողությամբ զբաղվելու ավելի մեծ հնարավորություններ: Դրանք հնարավորինս բացառելու համար կազմվել են ուսանողների քանակին հավասար, միմյանցից տարբեր թեստեր, հանձնարարվել են տնային անհատական առաջադրանքներ, անցկացվել են տարբեր տարբերակներով ստուգողական աշխատանքներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել լսարանում վերահսկման ապահովմանը:

Սրանք այն երևույթներն են, որոնք շատ հեշտ է ստուգել նաև կողմնակի միջոցներով, մասնավորաբար՝ ոչ պաշտոնապես հետևելով մասնաճյուղի անցուդարձին դասերի, միջանկյալ ստուգումների ու քննությունների, ավարտական բանավոր քննությունների ընթացքում: Այդ դեպքում արդեն կարող ենք ավելի հիմնավորված համարել այն պնդումները, թե մասնաճյուղում գնահատման համակարգին, նրա տարրերի կատարելագործմանն ու զարգացմանը դարձվում է պատշաճ ուշադրություն, դրանում կարելի է հաշվի է առնվում նաև կրթական հանրության հասարակական կարծիքը, ինչը նաև պատճառ է երևույթի վիճակագրական գնահատականի բարելավման, գնահատման համակարգի հասարակական-բարոյական նշանակության ու նրա հանդեպ ուսանողության վերաբերմունքի բարձրացման համար:

Մասնագիտական հոսքերի մակարդակով մասնաճյուղում անցկացվում են ուսանողների հետ պարբերական հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են գնահատման համակարգի, նրա յուրահատկությունների վերաբերյալ մասնաճյուղում առկա իրազեկման միջոցների (կայքի, դասընթացների փաթեթների, ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի և այլնի), նրանցից օգտվելու հնարավորությունների, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների գնահատման մեջ սուբյեկտիվ, աշխարհայացքային գործոնի իրական դերի, նրա բարոյահոգեբանական ազդեցության մասին խնդիրներ:

*Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին*